




ԳԵՐԱՇՆՈՐՀ Հ. ՍԱՀԱԿ ՎՐԳ. ԺԵՄՃԵՄԵԱՆ  
ՆՈՐԸՆՏԻՐ ԱԲԲԱՀԱՅՐ ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ

## ԳԵՐԱՇՆՈՐՀ Հ. ՍԱՀԱԿ Ծ. ՎՐԴ. ԾԵՄԾԵՄԵԱՆ

### ՆՈՐԸՆՏԻՐ ԱԲԲԱՀԱՅՐ

### ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ

Կիրակի, 23 Յունիս, 1996ին, Մխիթարեան երեքդարեան Մայրավանքին մէջ (Վենետիկ – Սբ. Ղազար), պաշտօնապէս կը յայտարարուի օրինական ընտրութիւնը Հոգչն. Հայր Սահակ Ծ. Վրդ. Ծեմծեմեանի, իբրեւ 12րդ արժանաւոր յաջորդ Մխիթարեան Միաբանութեան Հիմնադիր՝ Մխիթար Վարդապետ Սեբաստացիի:

Ժողովական բոլոր Վարդապետներու ծափողջոյններուն մէջ, Նորընտիր Աբբաճօր կը յանձնուի լանջախաչն ու մատանին: Կը փոխանակուին շնորհաւորական խօսքեր ու մաղթանքներ:

Նորընտիր Աբբաճայրը, Մխիթարեան Միաբանութեան միջին սերունդի ներկայացուցիչներէն է: Ծնած է Հալէպ, 5 Մարտ, 1939ին: Կուսակիւն արեւոյ ձեռնադրուած է Վենետիկի մէջ, 29 Մարտ, 1964ին:

Փիլիսոփայութեան եւ աստուածաբանութեան համալսարանական իր ուսումները կատարած է Հռոմ՝ Յիսուսեաններու «Գրիգորեան» Միջազգային Համալսարանը:

Պարագաներու բերումով, Գերչն. Աբբաճայրը միշտ մնացած ու պաշտօնավարած է Մայրավանքէն ներս, ստանձնելով պատասխանատու դործեր:

Երկար տարիներ, որոշ ընդհատումներով, իրեն յանձնուած է Մխիթարեան Փոքր Ժառանգաւորներուն (Մայրավանքին մէջ) եւ Մեծ Ժառանգաւորներուն (Հռոմի մէջ) հոգեւոր, ուսումնական իրաւական եւ ազգային խմորումի եւ կազմաւորումի փափուկ ու կարեւոր պատասխանատուութիւնը, որոնք մեծ ձեռնհասութեամբ վարած է:

Ուրիշ Վարդապետներու հետ միասին, Վարդապետական Ծայրագոյն Աստիճանը ստացած է 1991ին, Աբբաճայր՝ Հայր Գէորգ Ծայրագոյն Վրդ. Պալեանէն:

Նշած է «Բազմավէպ» պարբերականին պատասխանատու խմբագիրը (1985-1992), մասնակցելով անոր իր բազմաբնոյթ գրութիւններով ու շահեկան ուսումնասիրութիւններով (ծխական, դիւանային, պատմական ու մշակութային) :

Իրեն կը պարտինք Մխիթարեան Միաբանութեան 300 տարիներու չափազանց հարուստ Դիւանին պրպտումները, դասակարգումը, ինչպէս նաեւ զանազան նիւթերու ուսումնասիրութիւնները եւ հրատարակութիւնները (պատմական, ազգային, մշակութային, եկեղեցական, ինչպէս նաեւ Մխիթարեան Միաբանութեան կեանքին ու գործունէութեան վերաբերող) :

1991-1996ի չրջանին, Սբ. Ղազարի Մայրավանքէն ներս, ան ստանձնած է Միաբանութեան Աթոռակալ-Տեղապահի պաշտօնը, ըլլալով միաժամանակ նաեւ պատասխանատուն Մխիթարեան Ձեռագրատան եւ Մխիթարեան Հրատարակչատան :

Իրեն կը պարտինք նաեւ վերջին տարիներուն մէկը միւսին ետեւէն հրապարակուած՝ Վենետիկի հայկական ձեռագիրներուն հարուստ հաւաքածոյին Դ., Ե. եւ Զ. ստուարածաւալ հատորներուն բծախնդիր պատրաստութիւնը եւ անոնց գիտական հրատարակութիւնը (1993, 1995, 1996) : Հրճուանքով կը հաղորդենք, որ այս շարքին Ե., Ը. եւ Թ. հատորներն ալ մամուլի տակ են եւ լոյս պիտի տեսնեն շուտով, գիտական աշխարհին յանձնելով հարուստ շտեմարան մը՝ հայ իմացական թէ նիւթական մշակոյթին վերաբերող անսպառ նիւթեր :

Նորընտիր Աբբասոր անունով ցարդ հրատարակուած են հետեւեալ արժէքաւոր աշխատանքները :

1. Հայր Ներսէս Սարգիսեանի ուղեւորութիւնը դէպի Փոքր եւ Մեծ Հայք (1843-1853), Վենետիկ, 1974 :

2. Աբրահամ Երեւանցի, Պատմութիւն Պատերազմացն (1721-1736), խմբագրութիւն եւ հրատարակութիւն Հ. Ս. Ճեմճեմեանի, Վենետիկ, 1980 :

3. Հայր Ղեւոնդ Ալիշան՝ Տեսուչ Փարիզի Մուրատեան Վարժարանի (1858-1861), Վենետիկ, 1980 :

4. Միսիթար Աբրահօր Հրատարակչական Առաքելութիւնը, Վենետիկ, 1980 :

5. Քարտիսագրութեան Դպրոց մը Սբ. Ղազարու մէջ ԺԸ. դարուն, Վենետիկ, 1981 :

6. Հայր Միքայէլ Զամչեան եւ իր Հայոց Պատմութիւնը, Վենետիկ 1983 :

7. Գեորգ Դպիր Տէր-Յովհաննիսեան (Պալատեցի) եւ Միսիթարեանները, Վենետիկ, 1984 :

8. Նոր Գիրքեր Սարգիս Արք. Սարաֆեանի մասին, Վենետիկ, 1985:

9. Մարսիլիոյ Հայկական Տպարանը (1685-1985, 300ամեակի առիթով), Վենետիկ, 1986:

10. Յովհաննէս Պատկեբախան (1695-1758), Վենետիկ, 1987:

11. Հայ Տպագրութիւնը եւ Հոռոմ (Ժէ. դար), Վենետիկ, 1989:

12. Մայր Յուցակ Հայերէն Զեռագրաց Մատենադարանին Միւրարեանց ի Վեներտիկ, Հատոր Դ., Վենետիկ, 1993:

13. Մայր Յուցակ Հայերէն Զեռագրաց Մատենադարանին Միւրարեանց ի Վեներտիկ, Հատոր Ե., Վենետիկ, 1995:

14. Մայր Յուցակ Հայերէն Զեռագրաց Մատենադարանին Միւրարեանց ի Վեներտիկ, Հատոր Զ., Վենետիկ, 1996:

Ճեմճեմեան Աբբասայրը, գիտական այս մեծ վաստակը կողքին, հրատարակած է նաեւ տասնեակ մը հոգեւոր ու կրօնական գրականութեան վերաբերող հոգեչա՛հ գրքոյկներ, որոնցմէ կարելի է յիշել հետեւեալները. - Ճանչնալ Քրիստոսը՝ աղօթքի կեանքով, (տպ. 1992), Քրիստոսի Սիրոյ հուրը (1994), Աւետարանական երանութիւնները, (1995), Աւետարանը ապրումով կեանքով (1996) եւ Աւետարանական իմաստութիւն (1996):

Նորընտիր Աբբասայրը, իր կեանքով ու գործով, կը ներկայանայ մեզի իբր պատասխանատու վանականի եւ Մխիթարեան տոկուն աշխատողի մը ցայտուն տիպար, յարաժամ նուիրուելով պատանի ու երիտասարդ ուսանողներու կրօնաբարոյական ու կրթական ասպարէզին, ինչպէս նաեւ ուսումնագիտական կամ հայագիտական աշխատանքներու:

Մխիթարեան իր վաստակը խօսուն ու նշանակալից վկայութիւն մը կը բերէ կատարուած աշխատանքներու ընդարձակութեան, տոկունութեան ու մանաւանդ անձնագոհութեան:

Բարի ու չարքաչ օրինակ մը՝ ապրող ու գալիք բոլոր սերունդներուն:

Հեռու երկրային ակնկալութիւններէ ու մարդկային սին փառքերէ, ան կը մնայ միշտ պարզ ու խոնարհ Մխիթարեանը, համոզուած ըլլալով՝ որ անձնագոհ նուիրումը եւ օգտակար աշխատանքը, համեստութիւնը եւ պարզութիւնը գեղեցիկ յատկանիշները կը կազմեն բոլոր մեծ մարդոց:

Շնորհաւորական մեր խօսքերուն հետ, կը մաղթենք անոր անսպառ կորով եւ անվհատ աշխատանք՝ Մխիթարեան գործադաշտի բերրի եւ օգտաշատ նուաճումներով:

Հ. Տ. ԵԱՐՏԸՄԵԱՆ

